Հավելված N 5
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարության գլխավոր քարտուղարի
2019 թվականի օգոստոսի 7-ի N308-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ **Նախարարություն**) **գիտատեխնիկական** վարչության (այսուհետ՝ **Վարչություն**) ավագ մասնագետ (ծածկագիր՝ **24-32.4-Մ4-1**)

(1.1.-րդ կետը փոփ. 16.03.20 գլխավոր քարտուղարի հր. 191-Ա)

1.2. Ենթակա և հաշվետու է
Ավագ մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:
1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետներից մեկը:
1.4. Աշխատավայրը
Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան,Վ.Սարգսյան 3/3

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները
Գործառույթները

1) մասնակցում է երկրում գիտատեխնիկական ներուժի, գերակայությունների զարգացման մշակման աշխատանքներին,
2) մասնակցում է գիտության կողմից նոր տեխնոլոգիական լուծումների մշակման ու արտադրության մեջ ներդրման աշխատանքներին,
3) մասնակցում է գիտական հաստատությունների և արտադրության ոլորտի ընկերությունների միջև սերտ համագործակցության դաշտի ստեղծման աշխատանքներին,
4) մասնակցում է գիտատեխնիկական ոլորտում միջազգային պահանջների և չափանիշների ուսումնասիրության, խնդիրների բացահայտման և գիտության ոլորտում կիրառելիության ապահովման աշխատանքներին,
5) մասնակցում է արտաքին և ներքին շուկաների գիտական գաղափարների և դրանց իրականացման մեխանիզմների, արտադրական նմուշների և լիցենզավորված պրոդուկտների ուսումնասիրության և դրանց հիման վրա գործնականորեն նոր և բարձր որակական ցուցանիշներով արդյունքների ապահովման աշխատանքներին,
6) մասնակցում է գիտական գաղափարների նորագույն տեխնոլոգիական չափանիշներով մշակման և արտադրության մեջ ներդրման աշխատանքներին,
7) իրականացնում է գիտատեխնիկական ոլորտի զարգացման ճանապարհային քարտեզի և գործողությունների պլանի, մշակման և դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսների պլանավորման և իրագործման աշխատանքները,
8) մասնակցում է օրենսդրական նորմերի, կարգավորումների, վարչական ընթացակարգերի և այլնի մշակման և իրականացման աշխատանքներին,
9) իրականացնում է գիտատեխնիկական ոլորտում մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացման, այդ թվում՝ անհրաժեշտ մասնագետներին ներկայացվող պահանջների մշակման, կարողությունների գնահատման, նոր ռեսուրսների հավաքագրման և առկա ռեսուրսների զարգացման պլանի կազմման և վերապատրաստման առաջարկությունների ներկայացման աշխատանքները,

10) մասնակցում է գիտատեխնիկական ոլորտի ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական բազայի հավաքագրման, մշակման, պահպանման, փոխանակման միասնական և ստանդարտ ձևաչափերի մշակման և ներդրման աշխատանքներին,
11) մասնակցում է տիեզերական գործունեության բնագավառի քաղաքականության մշակմանը՝ բացառությամբ՝ տիեզերական կապի,
12) մասնակցում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի տիեզերական գործունեության բնագավառին վերաբերող բաժնի մշակմանը՝ բացառությամբ տիեզերական կապի,
13) մասնակցում է տիեզերական գործունեության բնագավառի տեխնոլոգիաների զարգացման գերակայությունների և ուղղությունների մշակմանը,
14) մասնակցում է տիեզերական գործունեության բնագավառի զարգացման պետական ծրագրերի ու միջոցառումների մշակմանը, դրանց իրագործմանը և մոնիթորինգին՝ բացառությամբ տիեզերական կապի և համացանցի ծառայությունների,
15) մասնակցում է շրջակա միջավայրի վրա տիեզերական գործունեության վնասակար ներգործության նվազեցման աշխատանքների և միջոցառումների իրականացմանը,
16) մասնակցում է հանրապետությունում տիեզերական գործունեության բնագավառում գիտատեխնիկական ներուժի (մարդկային ռեսուրսներ, հետազոտական կարողություններ, նորարարական էկոհամակարգ) զարգացմանն ուղղված ծրագրերի մշակմանը,
17) մասնակցում է տիեզերական բնագավառում միջազգային համագործակցության ծրագրերի, տիեզերական բնագավառի միջազգային առաջատար ընկերությունների ներգրավման աշխատանքների վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը,

Իրավունքները՝

18) ստանալ երկրում գիտատեխնիկական ներուժի, գերակայությունների զարգացման և առաջընթացի տեսլականի մշակման համար անհրաժեշտ տեղեկատվություն,
19) ստանալ գիտական հաստատությունների և արտադրության ոլորտի ընկերությունների միջև գոյություն ունեցող համագործակցության մասին հնարավորինս լայն տեղեկատվություն.
20) ստանալ տեղեկատվություն գիտատեխնիկական ոլորտում միջազգային պահանջների և չափանիշների ուսումնասիրության, խնդիրների բացահայտման և գիտության ոլորտում կիրառելիության ապահովման առկա իրավիճակի վերաբերյալ,
21) ստանալ արտաքին և ներքին շուկաների գիտական գաղափարների և դրանց իրականացման մեխանիզմների, արտադրական նմուշների և լիցենզավորված պրոդուկտների ուսումնասիրության վերաբերյալ ունեցած տեղեկատվություն,
22) ստանալ գիտատեխնիկական ոլորտի զարգացման մշակման և դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսների առկա վիճակի վերաբերյալ տեղեկատվություն,
23) ստանալ օրենսդրական նորմերի, կարգավորումների, վարչական ընթացակարգերի վերաբերյալ փաստաթղթեր,
24) ստանալ գիտատեխնիկական ոլորտում առկա մարդկային ռեսուրսների կարողությունների և անհրաժեշտ մասնագետների կարողությունների գնահատման վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների նյութերը.
25) ստանալ գիտատեխնիկական ոլորտի ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական բազայի հավաքագրման, մշակման, պահպանման, փոխանակման միասնական և ստանդարտ ձևաչափերի մշակման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն,
26) մասնակցել շահագրգիռ մարմինների հետ համատեղ տիեզերական ծրագրերի և տիեզերական սարքաշինության աշխատանքների կազմակերպմանը,
27) մասնակցել տիեզերական սարքաշինության ստանդարտացման կանոնների և նրանից բխող տեխնիկական պայմանների մշակմանը,
28) մասնակցել գիտական և սոցիալ-տնտեսական նշանակության տիեզերական տեխնիկայի նախագծակոնստրուկտորական, փորձակոնստրուկտորական, փորձատեխնոլոգիական և նախագծատեխնոլոգիական աշխատանքներին:

Պարտականությունները՝

1) Ուսումնասիրել երկրում գիտատեխնիկական ներուժի հնարավորությունները և ներկայացնել առաջարկություն գերակայությունների զարգացման և առաջընթացի տեսլականի մշակման վերաբերյալ,
2) վերհանել գիտական հաստատությունների և արտադրության ոլորտի ընկերությունների միջև գոյություն ունեցող համագործակցության, գործընկերային հարաբերությունների զարգացման հնարավորությունները և ներկայացնել առաջարկություն ավելի սերտ համագործակցություն ապահովելու վերաբերյալ,
3) ուսումնասիրել գիտատեխնիկական ոլորտում միջազգային պահանջներն ու չափանիշները, բացահայտել գոյություն ունեցող խնդիրները և ներկայացնել առաջարկություն գիտության նվաճումների կիրառելիության ապահովման վերաբերյալ,
4) ուսումնասիրել հատուկ գոտիների՝ տեխնոպոլիսների, ստեղծման նախագծերի վերաբերյալ փաթեթները և ներկայացնել առաջարկություններ ժամանակակից արդյունաբերական ձեռնարկությունների հետ գիտական հաստատությունների համագործակցության հնարավորությունների զարգացման վերաբերյալ,
5) ուսումնասիրել արտաքին և ներքին շուկաների գիտական գաղափարները և դրանց իրականացման մեխանիզմները և ներկայացնել առաջարկություն արտադրական նմուշների և լիցենզավորված պրոդուկտների հիման վրա գործնականորեն նոր և բարձր որակական ցուցանիշներով արդյունքների ապահովման վերաբերյալ,
6) ուսումնասիրել օրենսդրական նորմերի, կարգավորումների, վարչական ընթացակարգերի վերաբերյալ փաստաթղթերը և մշակել օրենսդրական դաշտը կարգավորող իրավական ակտեր,
7) կազմել գիտատեխնիկական ոլորտի ճանապարհային քարտեզ և գործողությունների պլան, ուսումնասիրել ճանապարհային քարտեզի և գործողությունների պլանի մշակման և դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական, մարդկայինև այլ ռեսուրսների հնարավորությունները,
8) ուսումնասիրել գիտահենք արտադրության համար անհրաժեշտ կադրերի պատրաստման և վերապատրաստման կարիքները,
9) ոսումնասիրել արտաքին և ներքին շուկաների գիտական գաղափարները և դրանց իրականացման մեխանիզմները և ներկայացնել առաջարկություն արտադրական նմուշների և լիցենզավորված պրոդուկտների հիման վրա գործնականորեն նոր և բարձր որակական ցուցանիշներով արդյունքների ապահովման վերաբերյալ,
10) հավաքագրել նյութեր գիտատեխնիկական ոլորտի ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծման համար և ներկայացնել առաջարկություն տվյալների մշակման, պահպանման, փոխանակման միասնական և ստանդարտ ձևաչափերի վերաբերյալ,
11) աջակցել առաջադրված տեխնիկական պայմանների հիման վրա, փորձանմուշների աշխատանքային տեխնիկական մասնագրերի կազմման աշխատանքերին,
12) ստուգել թողարկված տիեզերական արտադրատեսակի բնութագրերը՝ համադրելով տեխնիկական մասնագրերով սահմանված բնութագրերի հետ,
13) աջակցել տեխնիկական և կազմակերպչական հայեցակարգերի իրագործելիության գնահատմանը՝ արտադրության կազմակերպման ժամանակացույցի, շահագործման, պահպանման և ծախսերի հետ կապված սահմանափակումների հիմնավորմանն ու սահմանմանը,
14) կանխատեսել և արդյունավետ գնահատել ներկայացված նախագծերի ռիսկերը:
15) աջակցել տիեզերական սարքաշինության փորձակոնստրուկտորական գիտահետազոտական աշխատանքներին, իրականացնել հիմնավոր վերլուծություններ,
16) աջակցել տիեզերական սարքաշինության առանձին տեխնոլոգիական չափանիշների՝ ուղեցույց փաստաթղթերի, ինչպես նաև աշխատանքների արդյունքների ձևակերպման մեթոդաբանության և կանոնների մշակմանը,
17) աջակցել առաջադրված տեխնիկական պայմանների հիման վրա փորձանմուշների աշխատանքային տեխնիկական մասնագրերի կազմմանը:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները՝
Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը
Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ճարտարագիտության կամ տնտեսագիտության բնագավառներում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

(3.3.-րդ կետը փոփ. 27.02.20 գլխավոր քարտուղարի հր. 141-Ա)

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ
Ընդհանրական կոմպետենցիաներ՝
1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝
1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները
Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը
Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը
Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը
Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: